ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.10.2018թ. կնքված N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/1-1 պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին

ք. Երևան « » ---------- 2018 թ.

ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Սարգսյանի, որը գործում է «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/1-1 պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 8.1 և 8.3-րդ կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության, վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ պայմանագիր կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սահմանված կարգին՝ Գնորդի և Վաճառողի փոխադարձ համաձայնությամբ լուծել **19.10.2018թ.** կնքված թիվ ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/1-1 պայմանագիրը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի և Վաճառողի ստորագրման պահից:

2.2 Սույն համաձայնագրով Գնորդը և Վաճառողը հավաստում են, որ վերոնշյալ պայմանագրի լուծման արդյունքում որևէ կողմ մյուս կողմի հանդեպ չունի չկատարված պարտավորություններ և որևէ գույքային կամ ոչ գույքային պահանջ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂ՝

«Ոսկան Երևանցի» տպագրատուն - ԱՀ ԲԲԸ
ք. Երևան, Նոր-Նորք 1-ին զնգ,
Սամվել Սաֆարյան 11/1 Ա
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ Հ/Հ Հ/Հ
220463330997000
ՀՎՀՀ 02502806

Տնօրեն՝

_____ Մ. Սարգսյան
/ստորագրություն/

ԳՆՈՐԴ

ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմին
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
Հ/Հ 900013404018
ՀՎՀՀ 00454227

Գլխ. քարտուղարի ժ/պ

_____Հ. Գևորգյան
/ստորագրություն/

Digitally signed by GEVORGYAN HOVHANNES 1307680054
Date: 2018.11.05 10:54:28 GMT+04:00